ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը.

Սուրեն Մինասյան, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության բաժնի գլխավոր մասնագետ

2. Գործուղման վայրը և ժամկետները.

Ք. Մանիլա, Ֆիլիպինների Հանրապետություն, 2024 թվականի սեպտեմբերի 16-ից 19-ը

3. Հրավիրող կողմը.

Ասիական զարգացման բանկ

4. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).

Մասնակցություն Ասիական զարգացման բանկի կողմից կազմակերպված՝ Կլիմայի հարմարվողականությանն ուղղված ներդրումների պլանավորման համաժողովին:

5. Քննարկված թեմաները.

Համաժողովի շրջանակներում քննարկվել են կլիմայի փոփոխությունների ֆիսկալ ռիսկերի չափմանն ու կլիմայի հարմարվողականությանն ուղղված ֆինանսավորման ներգրավմանն առնչվող հարցեր:

6. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Համաժողովի առաջին՝ «Ռիսկերի և զարգացման ուղիներ» թեմայով պլենար քննարկմանը հանդես եմ եկել որպես պլենարիստ՝ ներկայացնելով Հայաստանի Հանրապետության գրանցած առաջընթացը կլիմայի փոփոխություններին առնչվող ֆիսկալ ռիսկերի չափման գործում, ինչպես նաև երկրի հարկաբյուջետային քաղաքականության առանձին ուղղությունների վերանայումները՝ համապատասխանեցնելով դրանք կլիմայի փոփոխությունների գլոբալ օրակարգին: Մասնավորապես, ներկայացրել եմ.

- Արժույթի միջազգային հիմնադրամի աջակցությամբ իրականացված «Կլիմայի փոփոխությունների ֆիսկալ ռիսկերի քանակական չափում» տեխնիկական հաշվետվության արդյունքներն ու դրանց հետագա զարգացումները Ասիական զարգացման բանկի փորձագիտական թիմի կողմից,

- հանրային ներդրումների կառավարման շրջանակի վերանայումները, որով ներդրումային ծրագրային առաջարկների գնահատման գործընթացում ներառվել է կլիմային առնչվող բաժին,
- բյուջետային ծրագրերի նշագրումը (tagging), ինչը հնարավորություն է տալիս՝ հաշվառելու ու ուսումնասիրելու կլիմայի փոփոխությունների մեղմմանն ու հարմարվողականությանն առնչվող ծրագրերը,
- ՀՀ ֆինանսների նախարարության կողմից կլիմայի օրակարգի շուրջ ակտիվացող համագործակցությունը միջազգային դոնոր կառույցների ու այլ գործընկերների հետ, օրինակ՝ «Ֆինանսների նախարարների կոալիցիա հանուն կլիմայական գործողությունների» նախաձեռնության շրջանակներում:

Առանձին հանդիպում եմ ունեցել Ասիական զարգացման բանկի համապատասխան ներկայացուցչի հետ, որի հետ քննարկել եմ առաջիկայում ՀՀ ֆինանսների նախարարության առաջարկով Ասիական զարգացման բանկի կողմից ՀՀ համապատասխան պետական կառույցների աշխատակիցների համար նախատեսվող աշխատաժողովի կազմակերպման մանրամասները:

7. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Համաժողովի շրջանակներում որոշումների կամ պայմանավորվածությունների ընդունում և փաստաթղթերի ստորագրում չի նախատեսվել:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Առաջարկություններ չկան:

9. Ստորագրությունը, ամսաթիվը.

22 սեպտեմբերի, 2024թ.